ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Տնօրինական խորհրդի

նախագահ Ք. Աբրահամյան

«09» 01 202 4 թ.

(ստորագրություն)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. Տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման նպատակը

- որակի կառավարման համակարգի վերլուծության համար օբյեկտիվ տվյալների ամբողջականություն, հիմնավորված որոշումների կայացում՝ ուղղված բարելավումներին,
- Քոլեջի կրթական և այլ ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում,
- Քոլեջի և շահակիցների միջև կապի ամապնդում, Քոլեջի հեղինակության, իմիջի բարձրացում պոտենցիալ շահակիցների, գործատուների մոտ, Քոլեջի ծառայությունների որակի շարունակական բարձրացում:

2. Շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը ներառում է՝

- ուսանողների և դասախոսական անձնակազմի բավարարվածության գնահատումը Քոլեջի ռեսուրսներից, դրանց հասանելիությունից,
- շրջանավարտների, գործատուների և այլ արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրումն ու գնահատումը Քոլեջի ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության տեսանկյունից,
- տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մշտադիտարկումը համակարգված և պարբերական բնույթ ունեցող ընթացակարգ է, որն ուղղված է Քոլեջի որակի ապահովման ուղղությամբ հիմնական խնդիրների լուծմանը:

3. Կարգի նկարագրությունը

Շահակիցների կարիքների գնահատումը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1. գնահատմանը ուղղված աշխատանքների պլանավորման պարբերականության որոշում և սահմանում,

2. շահակիցների խմբի որոշում,
3. գնահատման ցուցանիշների կամ չափանիշների համակարգի մշակում,
4. գնահատման մեթոդների ընտրություն,
5. ինֆորմացիայի աղբյուրների որոշում,
6. ինֆորմացիայի ստացում շահակիցներից,
7. արդյունքների մշակում՝ ստացված տվյալների համակարգում և վերլուծություն,
8. գնահատման վերաբերյալ հաշվետվության կազմում,
9. Քոլեջի շահակիցների շրջանում տեղեկատվության ապահովում գնահատված արդյունքների:

Գնահատման ցուցանիշներն են՝

1. շահակիցների պահանջները և սպասելիքները,
2. ուսանողների առաջադիմության և ունակությունների մակարդակն ու որակը,
3. կրթական գործունեության որակը,
4. շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում և այլն:

Գնահատման համար հաշվի է առնվում և վերլուծվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1. կոնկրետ շահակիցների խմբի պահանջները, մշտադիտարկման արդյունքները, կայացվող որոշումները:

4. Տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները

Քոլեջի ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումը իրականացվում է հետևյալ մեխանիզմներով՝

1. ուսումնառողների բողոքների ուսումնասիրություն:

Գնահատումը անցկացվում է հետևյալ հարցերի շուրջ՝

1. մասնագիտության կրթական ծրագրերի և առկա ռեսուրսների համապատասխանությունը,
2. լսարանների կահավորվածությունը,
3. ուսումնամեթոդական ապահովվածությունը,
4. քննություններ և գիտելիքի ստուգման այլ ձևեր:

Գնահատումը կատարվում է

1. ֆոկուս-խմբերի տեսքով,
2. հարցազրույցների կազմակերպման միջոցով,
3. կազմակերպությունների կողմից առաջարկությունների ուսումնասիրման միջոցով,
4. շրջանավարտների հետ Քոլեջի ղեկավարության հանդիպումների և զրույցի կազմակերպման միջոցով, հետադարձ կապի այլ տեսակների կիրառման միջոցով: